

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

8 օգոստոսի, 2020 N 52

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N 45
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ կետերով և հաշվի առնելով, որ վերացել է Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստան համայնքի վարչական տարածքում անձանց ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունը՝ **ո ղ ո շ ու մ ե մ** .

1. Արցախի Հանրապետության պարետի 2020 թվականի հուլիսի 25-ի «Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստան համայնքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների մասին» N 45 որոշումն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ